Karl H. Pantzerbjerg

Ahnen

München 1921

891.99
P-95

891.99
Թում 35

19 NOV 2011

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 36

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱՆՈՒՇ

(ՊՕԷՄԱ.)

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

Ս. ԱՌՔԻՆԻԱՆ
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ
„ԿԻԼԻԿԻԱ„
Կ. Պոլիս

Կ. ՊՕԼԻՍ
1921

23.04.2013

32250

Տպագրիչ - Հրատարակիչ ՎԱԴԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ

36587-62

ԵՓԹԵՐԳԱՆՔ

(Համբարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թեւին՝ թրռչելով՝
Փէրիները սարի գագաթին
Հաւաքուեցին գիշերով:

«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զբաղնաղագեղ ոգիներ,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս Սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սրրտով խընդիրք արել՝
Բարի ժրպտան իր սէրին...

Ափսո՜ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ դու եարին,

Ափսո՞ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՞ս էդ ծով աչքերին...»

Ու նրանց հետ ցող-արցունքով
Լցված սրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տրխուր սիւգով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուրիկ,
Վո՜ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՜ւշ, Սարո՛, վուշ-վո՜ւշ իգի՛թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...

Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զրքնաղագեղ ոգիներ...»
Ու փէրիներն այսպէս տրխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հրաշալի
Հնչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արեւի՝
Անտես, անհետ չքացան:

Խոր սուզեցին ակն աղբիւրի,
Մրտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վրտակների
Ալիքները պաղպաջուն:

ԳՈՒԳԱԶԻՆ ԵՐԳ

I

Կանչում է կրկին, կանչում անդադար.
Այն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու՝ թեւերն սհա փռած տիրաբար՝
Թռչում է հոգիս, թռչում դէպի տուն:
Ուր որ հայրենի օջաղի առաջ
Վաղո՜ւց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ծրմրան երկար գիշերը նըստած՝
Խոսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շաբքերով բրռնած շուրջ պարի,
Հրսկայ շուրջ պարի բրռնած երկընքում,
Հրճեւում են, ասես այն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դրստեր,
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հրսկաներ,
Խոլ-խոլ հրսկաներ հրնոց աշխարհի,
Փախցրրին բերին անառիկ Լօռի: *)

II

Էյ հին ծանօթներ, էյ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտրս ընկան,
Առաջրս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմի չկան:

(*) Առասպելն ասում է թէ՝ Դեւ-Ալը (Դեալ-սարը), Դեւ-Բեթը (Դեքեդ գետը) եւ ուրիշ դեւեր՝ յափշտակել են Արագածի աղջիկը, բերել են Լօռի:

Անցե՛լ են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած գարնան կայծին ծեր լանջում,
Անցե՛լ ծեր գլխի հերւան ծիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նրրանց եմ կանչում:
Ողջո՛ն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թրուչուն կարօտով փընտրում ծոր ու լեռ,
Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
Դո՛ւրս եկէք տեսնեմ, շոշափեմ, լսեմ.
Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
Լըցրէ՛ք պօէտի հաճոյքը վրսեմ...

III

Եւ մութ այրերից, մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
Արծագանգն ահա լըսում եմ նորից:
Թընդում է գըւարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
Ու բոլորն ահա նորից կենդանի
ԵՀնում են աշխոյժ վաղորդեան մութից,
Ու թարմ, ցօղաւատ լեռների լանջում...
Սո՛ւս... ականջ արա, - հովիւն է կանչում...

IV

—Աղջի՛, անաստուա՛ծ, նրստիր վրրանում,
Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգրստանում,
Խաղեր կապելով,
Զօլեր չափելով,

Ոչխարրս անտէր,
Ընկել եմ հանդեր:
Սամա՛ն, էրեցիր սիրտրս քու սիրով,
Ոտրս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ կը փախցնեմ զօրով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ:
Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չը տան,
Արին կը թափեմ ես գետի նրման,
Սարերը կընկնեմ, կորչեմ անգիման,
Ա՛յ սեւ աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերրդ կամար
Աղջիկ, քեզ համար:

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նրստել վրրանում.
-Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ.
Դու չես իմանո՞ւմ. ականջ դի՛ր, տե՛ս...
— Հերիք է, Անո՛ւշ, ներս արի դազէն,
Քանի՞ դուրս թրուչես, նայես դէս ու դէն,
Տեսողն էլ կասի — ի՞նչ աղջիկ է սա,
Հազար մարդի մօտ կերթայ կը խօսայ:
— Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին,
Ի՞նչքան աւլուկ է տալի կանանչին.
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
Էն սարի լանջին «ջան գիւլում» ասեմ:
—Հանգիստ կաց,Անո՛ւշ,դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջահել չոբանների մօտ,

Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի, ամոթ է, ամո՞թ:
- Ա՛խ, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ընչի՝
Մին լաց է լինում սեւակնա՛ծ, տըխուր,
Մին թեւ է առնում, ուզում է թըռչի՛,
Չը գիտեմ՝ թէ ուր, չը գիտեմ՝ թէ ուր...
Նանի ջան, նանի, ես ի՞նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն անհանգիստ Բա՛լէդ...
Նանի ջան, Նա՛նի, կուժը թող թռնեմ,
Աղբիւրը գընամ աղջիկների հետ...»

VI

Կըժերն ուսած՝ թըրբռալով՝
Զուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը գընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում,
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հընգուր-հընգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Դալիս՝ անցնում հանդ ու ջոլեր,
Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:

Եարաբ խըմեց, եարաբ հովցաւ,
Վառուած սիրտը էն եարի,
Եարաբ հովցաւ, եարաբ անցաւ
Անքուն ցաւը ջիգեարի...

— Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ,
Վառուած, տարուած քու սիրով,
Էրուած ջիգեարն եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ ազիզ եարն է լալի
Հընգուր-հընգուր էն սարում:

VII

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Զայն տըւաւ թաքուն մի խաւար կասկած.
— Էն ե՞րբ էր՝ Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գընաց ու ետ չը դառաւ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցուել, իրար փաթաթուել,
Հազար չար ու շառ հազար հարամի՝
Հազար ջահելներ վըխտում են հիմի...
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ՝
-Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազրդ կըտրած...,
Ու ծորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զաւակին.
— Աղջի՛, սեւասիրտ, քու ահը կըտրի,
Աղջիկը մինակ ծո՞րը կը մըտնի՛.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցրել՝ չես կարում գըտնել.
Աղջի, հէ՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...
Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ«...
Ու ծորի գըլխին մոլորած կանգնած
Նայում է ներքեւ սիրտը սեւակնած:

Ամպերն եկել են, սարերը պատել,
Ջորերը լցուել, իրար փաթաթուել,
Հազար շար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վրխտում են հիմի:

VIII

-Թո՛ղ, կանչում են ինձ... մայրս կիմանայ...
-Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի քիչ էլ մընա...
-Չէ՛, թող ես գընամ. ա՛խ, ինչ խենթ եմ ես,
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջուում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում:
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՞րբ եմ եկել այստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ անիրա՛ւ,
Էնքան մընացի՝ աչքս ջուր դառաւ:
Ասում են՝ ուռին՝
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես.
Խեղճը դողալով՝
Անյոյս կըռացաւ,
Թարթիչ չորացաւ,
Ուռենի դարձաւ.
Ձըրերի վըրայ
Գլուխը կախած՝
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թէ եարը եարին
Ո՞նց է մոռանում...

— Ա՛խ, Անուշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում,
Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խօսում.
Էն՝ որ գիշերով շընու եմ, փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում.
Էն, որ մոլորած, նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում.
Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ յիշում...
Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստա՛ծ Անուշ...
Ա՛ռըեցած՝, Անուշ,
Հառաչեց հովիւն ու սըրտին ընկաւ,
Հալուեցաւ, հանգաւ...

IX

—Անո՛ւշ. ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի,
Կանչում է մայրը, հառաչում, կանչում:
—Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛,
Ջորից աղջըկայ ձայնն է զոզանջում:
Ու մազերն անկարգ տըրած թիկունքով
Ու ցըրուած շիկնած այտերի վըրան:
Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նըման:
Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
Թողել է այն էլ ջըրի եզերքին:
Ա՛խ, անհոգութիւն ջահել աղջըկայ...
— Նանի՛, վախեցայ, զանգատում է նա,
Եւ ուզում է լալ, չէ՛ կարողանում.
Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...

Անիծում է ծեր մայրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

X

(Հանդարտման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալեան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով.

«Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եա՛յլա
Սեւ սարեր եա՛յլա,
Եայլա ջան, եայլա։

Երգ ու բոյր խառնած,
Թեւ-թեւի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա.
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Եկաւ Համբարձում,
Ծաղկով զարդարւած,
Մեր բաղդին հարցում.
— Ո՞վ է մեզ գրրւած:

Ա՛յ ջան տղղայ, չոբան տղղայ, ո՞ւմն ես դու.
Ատուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Հուր սրրտեր, եայլա.
Եայլա ջան, եայլա:

Թընդում են երգեր. խնդում են սրրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սրրտումն է մընում:

XI

Պրտոյտ է տալի վիճակը նորից,
Քուշուշքը գրլխին ծաղիկ ծաղկամէր,
Թընդում «ջան գիւլում» մատաղ սրրտերից,
Հետը գրւգրւում էին ծաղկոտ սարեր:
Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլա դիպչի
Քեզ սիրի ով որ աղջիկ:
Ո՜հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սեւաբա՛խտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ծեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

-Սուտ բան է, քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա:
Սիրտդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղդ խաղա, ջան գիւլում ասա՛:
-Ախ, չէ՛, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ,
Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել.
Ես միշտ էլ էսպէս անբախտ կը լինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել:
Ասում են՝ մի օր, ես օրորոցում՝
Մի պառաւ դաւրիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նրան բաժին չի տալի:
-Կորի՛, ասում է, կորի՛ մեր դրռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր. գրնա՛...»
Ու դաւրիշն այնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դրրա օրը լացով անց կենայ...
Ախ, այն դաւրիշի անէծքին անգութ
Ու այս վիճակին տեղեակ է Աստուած,
Սիրտս էլ միշտ փա՛կ, սիրտս էլ միշտ մո՛ւթ,
Ինչ կայ, չը գիտեմ, իմ առջեւ պահուած...
-Մի՛ տրրտմիր, Անո՛ւշ, մի՛ լինիր յամառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խեղաւ դաւրիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու այդպէս սրրտաճա՛ք...
Հանգի՛ստ կաց քոյրի՛կ, մի՛ վախիր այդքան,
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Այդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջեւ դեռ կան երջանիկ օրեր:
Սուտ բան է. քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղդ խաղա, ջան գիւլում ասա:

(Խումբը երգում է)

Աղջի բախտաւո՛ր,
Երնէ՛կ քու սէրին,
Քու սարի սովոր
Սեւ-սեւ աչքերին:

Համբարձում, եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա,
Սէր-օրեր եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես:

Համբարձում, եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա,
Սար-եարեր, եա՛յլա
Եայլա ջան, եա՛յլա:

XII

Զըմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրրճւում էր անգուսպ ամբոխը գիւղի.
Դիւղն էին իջել հովիւ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից յետոյ լայն հրրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գրլխատան,
Զուռնաչին փրչեց կոխի եղանակ,
Ահեղ ու ջահել իրարով անցան:

Հարա՛յ են տալի — «քաշի՜ հա, քաշի՜...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր զառնարած Մօսին:
Ողջ գիւղը կանգնեց պարբսպի նման,
Ջոկուեց, բաժանուեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլեւան,
Կանգնեց թիկունքին տղերանց մէկի:
Գոռում են, գոչում երկու բանակից.
-Սրբտապինդ կացէ՛ք, մի վախէք, տղերք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջիկերք:
Ու տաքանում են տղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խրում են գօտին,
Գետին են զարկում ծեռքերը հաստիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Ադաթ կայ սակայն էն մութ ծորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
Ամբոխի առջեւ իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բռնած Սարօն ու Մօսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի.
Ընկնում են գետին, երնում միասին,
Դրժւար է իրրեւ յաղթել մէկ մէկի:
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սրբտատրբոի նայում աղջիկներ,
Եւ զուր է Անուշն, իր շունչը կտրած,
Սառել ու կանգնել, ինչպէս մի պատկեր:
Անուշը կանգնա՜ծ... Սարօն նրկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջեւ մըլարը պատեց.
Մոռացաւ ընկեր, ադաթ ու աշխարք:

Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արաւ Սարօն, ծրնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վրէն:
Ամբոխը թափեց հարաւ-հրրոցով,
Վեր թռցրեց ջահել փահլեւաններին
Եւ՝ ուրախութեան աղմուկ-գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժւում են դողում պատեր ու օճորք.
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջիկերք:

XIII

Վերկացաւ Մօսին, իրեն կըտրատում,
- Թող գա՛յ, գոռում է, որ բռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արեւս եմ երդւում,
Էլ չի պարծնելու երբեք չէ ծեռից.
Վէ՛ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ գայ.»
Ու ամէն կողմից ուրախ հրրհրոում,
Թունալի ծաղրով կանչում, են գոռում.
— Չէլա՛ւ, էդ չէլաւ,
Վեր չի գըցել դեռ,
Մօսին թոլ էլաւ —
Խոզապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տղե՛ր,
Շատ էլ լաւ կանի,
Մէջքը թա՛փ տուէք,
Թող մին էլ բռնի.
Հա՛, հա՛, հա՛, տղե՛ր,
Մէջքը թա՛փ տուէք...

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ ԳՐ

XIV

Եւ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սեւակնած սրտից,
Դընում է ըշտապ, քայլերը մոլոր:
-Ամո՛թ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամո՛թ քեզ նման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
Ի՞նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Նրրանից յետոյ երեւաս կանգնաց...
Եկա՛ծ էր էս բանն իսկի քու գլխին...
Ծաղրաղեղ դառաւ բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի՛, գետինը մըտիր,
Տանը վեր ընկի՛ր, իլիկ պըտրտիր»...

XV

-Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ սպանիր.
Սըրանից յետոյ չե՛մ սիրել նրրան...
Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...
Սիրտս դողում է տերեւի նման...»

Խընդրում էր լալով եղբօր առաջին
Անզօր ու դալուկ իր քոյրը չոքած,
Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նրրան աչքը բաց:

-Դէ՛ իմ անունով երդւիր, անրզգա՛մ,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,

Թէ չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչեւ դաստակը սիրտդ եմ խրելու:

Քու ոտի հողն եմ, Մօսի՛ ջան, Մօսի՛,
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում ասի,
Տեսնո՞ւմ ես չոքած ի՞նչպէս եմ լալիս...

-Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ, խաբեբա՛յ.
Ջե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մտնում՝
Հեկեկում ես դու գիշերուայ մրթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սա՛ր, Սարօ» ես ասում...

-Մօսի ջան, Մո՛սի, գլխովդ շուռ գամ.
Ինձ մի՛ սպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչել ես նրրան երազում...
Ինձ մի՛ սպանիր, դամէդ տար հեռու...
Քու քոյրը չեմ ես... իմ Մօսին չես դո՞ւ...

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպէր տըղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
Անկոտրում Մօսին էլ ո՞ր Մօսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարազատ քըրոջը տեսնէր
Նամարդ ընկերի-Սարօի գըրկում:
Դուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարօի անունն ու սէրը թաքուն

Խանչալի ծայրով սրբտիցը հանի:
Ո՞վ գիտի՝ գուցէ հէնց այս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հօտից ոչխար են քշել,
Մէկմէկից վրէժ առնելու համար:
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
Որ մէկի դէզը, արդիւնքը հընձի,
Գիշերուայ ժամին, հրով բըռընկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նման
Նոր են ջուր խըմած ծորից բարձրանում.
Քարոտ Թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր է արեւը պրռունքը հանում.
Գիւղում աղմուկով իրար են անցնում,
Կրտեր ծայրերին կանայք հաւաքած,
Տըղերքը դէպի քարափն են վազում
Հըրացանների կիսերից բըռնած:

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վրդովված տըղերանց միջին,
Մատը դէպի ծոր մեկնելով հանդարտ
Այսպէս նա պատմեց զօր տարով չիբխին.
—Էս գիշեր կէսը կըլնէր գիշերուայ,
Դեռ չէի կրպցրել աչքըս տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղուայ,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...

Հա՛, հալալ կէսը կըլնէր գիշերուայ,
Շունը վերկացաւ էս կըռան վրայ.
Հէյ հէյ կանչեցի, ձէն տըւող չէլաւ,
Շունը գազազեց, շունը վեր կալաւ...
Հէյ գիտի, ասի ինքս իմ միջում,
Ի՞նչ է մընացել առաջւան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ.
Կը լինէր դառը գիշերուան կէսը,
Երկու մարդկային սեւ կերպարանքներ
Շան առջեւ փախած՝ ցած իջան դէսը...:
Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրուած
Տըղերքը ճեպով ծորը ներս մըտան,
Ու մըտի տակին, ճամբիցը ծըռուած,
Երկու մարդու թարմ ոտնատեղ զըտան:

XIX

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ծորեր ոտնատակ տըւեց,
Զորան Սարօին գըտնելու համար,
Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
— Հալալ է տըղին, ա՛յ իգիթութիւն.
Ահա՛ թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:
Մինակ Անուշի եղբայրը — Մօսին
Մընաց հանդերում. երդում կերաւ նա,
Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանայ:

XX

— Աղջի՛, Վա՛ղդիշաղ, թէ հոգիդ սիրես,
Մի, գարիդ գրցիր, տես ի՞նչ է ասում.
Աչքս խաւարի, տեսիլք դառնամ ես, —
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:
Մի մութ ծորի մէջ, մի նեղ ծորի մէջ
Անբախտ Սասոն ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ծէն ծէնի տրւած...
Մի գարիդ գրցի՛ր, թէ սրտով խընդաս,
Էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Աստուած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հողն ենք - Դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ծորի միջին
Խաղ էին կանչում ու ծէնով լալի,
Սասոի նանն էլ նրբանց առաջին
Աղուխ էր առել ու պար էր գալի...

— Աղջի՛, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
Էս չարն, էս բարին... Սասոն է էս էլ.
Տես, ահա, Սասոն սեւ ճամբէն ընկաւ...
Աստուած խընայի ջահել - ջիւանին,
Աստուած խընայի իր նազար նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սասոն վախցրած եղջերի նման,
Օրհասն առաջին, զընդակն ետեւից,
Հանդերը դրժոխք, ընկերը դուշման:
Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նրա բայաթին ողբում է տրխուր,
Ընկեր սարերին խօսում, գանգատւում:

«Բարձրը սարեր, ա՛յ սարե՛ր,
Ձէն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ծէն տրւէք
Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բութէս ծեզ արած,
Ձեր ծորերին, ծեզ արած,
Կուզեմ կորչեմ անգիման,
Էս աշխարքից բէզարած:

Կորչեմ բէզար դատարկուն,
Քար սարէ-սար դատարկուն,
Մեռնեմ պրրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն:

Մէխ կը մեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թէ յանկարծ իմանայ,
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ:

ԼԻՆԳԵՐՈՒԹԻՆ ԵՎԳ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարեւան,
Ու խօսք չեն գըտնում ասեն անարգւած,
Տարած-ետբերած, անբախտ աղջկան:
Ասուած խընայեց՝ կոպիտ եղբայրը
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադէմ, ալեւոր հայրը
Սկսաւ փըրփըրած թրքել, անիծել:
- Դո՛ւրս գընա՛, կորի՛, ա՛յլիրը, անրզգա՛մ,
Սեւ ու սուգ լինի թագ ու պըսակըդ,
Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգամ,
Գիտինը մըտնի երկար հատակըդ:
Տեսա՛ր, որ նըրան ատում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրդ,
Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նըրա հետ»:
Խոնըւած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հրոսակ ալեւոր:
- Դո՛ւրս գընացէք, դո՛ւրս, գոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուզիղն ինչ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըրանից յետոյ բանը կը պարզի:
Մի՛ յար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմես նըրան, բա կամ բո՞յ փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարձ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես քեզ անպատճառ...

- Ինչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
— Անո՛ւշ, հէ՛յ Անո՛ւշ... ջուր հասցըրէ՛ք,
ջո՛ւր...»

XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գիւղից սրբացան մի խումբ կըտրիճներ:
Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրուչում են, ասես ահից հալածւած,
Ու նըրանց առջեւ ահռելի բացւում,
Թրշշում է ծորը արիւնով լըցւած:
Գիւղը դատարկւեց մի ակնթարթում.
Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՛ւռ, սըրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքեւ... ձայն չի գալի դեռ...
Դեբեդն է միայն անդընդում՝ յուզւած՝
Խրլածայն ողբով տուրում դէպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկաւ ծորից,
Դէմքը այլայլած, քայլւածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սեւակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տրւաւ սընին
Սեւ հրրացանը, սեւ օձի նըման:

Պապանձեց նոյնպէս ամբոխը մեխուած,
Ոչ ոք ծրպրտալ չի համարձակւում.
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չոքանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբա՛խտ ծընող, վազում է անա,
Ջորիցն է տրխուր գոռոցը գալիս:

XXV

Սրգաւոր կանայք նորա եռուից
Հարա՛յ կանչելով ծորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարուեցին:
Իգիթին վայել սրբատաւուչ ողբով
Լաց ու կոծ տրին ձէն ձէնի տրուած,
Տղերքն էլ մընթին, լուռ ու գրվսիկոր,
Մընացին մօտիկ քարերին նրստած:
Ողբացին անշունչ դիակի վրա
Անտէր մընացած ոչխարի մասին.
Անսիրտ անէծքով յիշեցին վրա
Անճար մընացած խեղճ եարի մասին.
Եւ նրրա մասին, որ ընկերները
Հանդեր գընալիս Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շները
Կրտերը պիտի ուռնան, կըլանչեն:
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գընալ առանց Սարօի,
Սեւ շորեր հագած կը նրստի տանը՝
Անցած օրերը միտը կը բերի.
Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
Կրտրատում էին սիրտը ծեր նանի,

Եւ աղաչում էր նա մեռած որդուն
Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
— Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արեւ, կեանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խրլում,
Թըշնամի՛ որդի, դանաեա՛ն որդի»...
Բայց չէին բացւում աչքերը փակւած,
Շուրթերը սառել, չորացել էին,
Նրրանց արանքից ատամները բաց,
Սիպտակ շարքերով երեւում էին:
Եւ նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Ծառս եղաւ դուշման երկրնքի դիմաց,
Եւ հայհոյում էր, եւ կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձէն ձէնի տրուած...,
Դիշերը լիջաւ, սաստկացաւ մութը
Եւ նրաղեցին ծայները տրրտում,
Յոգնեցին, հանգա՛ն... Ծերուկ Դերեգը
Սրգում էր մենակ խաւար անդընդում:

XXVI

Եւ մի քանի ընկեր տղերքը
Ջորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սրբատաբեկ
Հողին տրւին հոփի դին:
Ծառ ու ծաղիկ սրւսրւալով
Բոյր խընկեցին դիւրեկան,
Ծեր Դեւ-բեդն էլ անեղ ծայնով
Երգեց վրսեմ շարական:
Ու տղերքը տրխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Ջորում թողած մի սեւ բրլուր,
Մի գերեզման անանուն:

ԳԵՏԵՐՈՒՂ ԵՐԳ

XXVII

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան,
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

— Սիրուն աղջի՛կ, ի՞նչ ես լալիս
Էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամեն օր:
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում
Մայիս կը գայ, մի քիչ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում՝
Ա՜խ, նա գընա՛ց, նա գընա՛ց . . .
Արտասւելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցընում ես
Զահել կրակն աչքերիդ:
Ներա անբախտ հողի վրա
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

— Շնորհակալ եմ, անցւոր ախպէր,
Աստած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին . . .

Ուրախ սրրտով դուք ծեր սէրը
Վայելեցէք անթառամ.
Ինձ արցունք է տրւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ . . .

Ու ման է գալիս
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տրխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ այն անմիտ տրտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխւեց,
Ինչպէս դատարկւեց կեանքում ամեն բան.
Սարերը մնացին որբ ու անչոքան,
Թէ ինչպէս յանկարծ նա զընաց հեռու,
Էլ չի դառնալո՞ւ, էլ չի դառնալո՞ւ...

«Ետ դա՞ռ, ե՛ռ, իգի՛թ,
Ետ դառ, անիրա՛ւ.
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տուն արի՛,
Փախի՛ր գիշերով
Ու թագուն արի ...

Ա՜խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քընած էն տրղէն,
Վրէն քաշած սեւ եափրնչին,
Կուրը հանած էն տրղէն...
Զա՞ն, իմ եարն է, ջանի՞ն մոռնում,
Ծաղկի հոտով նա հարբեց,
Սարի լանջին, հովի միջին
Մուչ-մո՛ւշ, անուշ մրրափեց:

Վե՛ր կաց, վեր, իգի՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛ւ,
Ոչխարդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,
Թուխ չորան, արի՛,
Կարոտը առնեմ...

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսանիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ թօն ու ծիւնով
Չի են խաղում, չափ տալի...
Աղջի, աղջի՛, մըտիկ արէք,
Էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
Ո՞վ էր տեսել էսպէս հարսանիք —
Ո՛չ հարս ունեն, ոչ փեսայ..

Բերում են հըրէ՛ն,
Ամա՛ն, մեր տան դէմ
Վէ՛ր դըրէք, վըրէն
Հիւսերքս քանդեմ...
Ես էլ եմ ուրիշ,
Էդ մ'ուր էք տանում..
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ախ, էֆ, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է լո՛ւռ, հոտած,
Արիւնը չոր դէմքի վըրա,
Աչքերն անթա՛րթ, սիպտակած:
Նա սիրում էր անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,

Նա գալիս էր ցողոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
Արի՛, անիրա՛ւ,
Կարոտած եարիդ
Աչքը ջուր դառաւ:
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել
Տե՛ս կը խըռովե՛մ,
Լաց կըլեմ ես էլ.
Չեմ խօսիլ քեզ հետ...
Չեմ սիրիլ քեզ էլ...»

XXVIII

Անլռելի վըշվըշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Ներքա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի,
Ներքա շուրջը հէք սիրուհին
Թընդացնում էր ողբ ու լաց,
Չայն է տալիս իր Սարօին
Ու պըտըտում մոլորած:
Եւ հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջկայ,
Բայց իր սիրած տըղան երբեք
Չըկա՛յ, չըկա՛յ ու չըկայ...

Վերվերում է գետը — վո՛ւշ, վո՛ւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»

Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տուն արի...
Կանչում է մայրը վերեւից, կանչո՛ւմ.
Լուռ են ծորերը, լուռ են անուշի,
Դուշման Դեբեդն է պղտոր մրընչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ, քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ - քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր,
Կայ հրաշալի, երջանիկ վայրկեան,
Բացւում են ոսկի երկրնքի դրռներ,
Ներքեւ պապանձում, լռում ամեն բան,
Եւ Աստուածային անհաս խորհրդով
Լցւում բովանդակ Նբրա սուրբ գրթով:

Այն վեհ վայրկենին չքնաղ գիշերի՝
Երկրնքի անհուն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած էրար են գալիս,
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրում
Աշխարքից հեռո՛ւ, լազուր կամարում:

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

ՆԱԽԵՐԳԱՆԳ

Հէ՛յ պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դրրէք իմ խաղին:

Մենք ամենքս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խընդում,
Դեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛ւ իմացէք,
Որ խօսւում է դարէդար,
Երնէ՛կ նրան, ո[illegible] գործով
Կապրի անվերջ, անդադար:

Զարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէ՛ծք նրա չար գործքին,
Որդիդ լինի թէ հէրն ու մէր,
Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում,
Որ ժրպտում է մեր սրտին.
Ո՞վ չի սիրում, թէկուզ դուշման,
Լաւ արարքը, լաւ մարդին:

Է՛յ, լաւ կենաք, ականջ արէք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խօսքս, տեսէք, ուր է գնում,
Քաջ որսկանի գիւղի պէս:

I

Նադիր Շահը զօրք հաւաքեց,
Զօրք հաւաքեց անհամար,
Եկաւ Թրմկայ բերդը պատեց,
Ինչպէս գիշերն էն խաւար:

— Հէ՛յ քաջ Թաթուլ, կանչեց Շահը,
Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
Ի՛նչ ես թառել ամրոցում:

— Մի՛ պարծենայ, գոռոզ Նադիր,
Պատասխանեց էն հրսկան.
Գրլխովը շա՛տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կայ անսասան:

Ասաւ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հաւլունի,
Թրռաւ, հեծաւ նրժոյգ իր ձին,
Դաշտը իջաւ արիւնի:

Ու քառասուն օր քառասուն գիշեր
Կռիւ տրւին անդադար,
Ընկան քաջեր, անթիւ քաջեր,
Բերդի գրլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անյաղթ, աննրկուն,
Զօրք ու բաբան խորտակւել են,
Նրրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, յաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Զահել կինը սեւաչեայ:

II

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց զէնքի,
Առանց զօրքի
Շահերի դէմ կը գընար:

Սիրոյ հընոց
Կրակ ու բոց
Էնպէս աչքեր թէ ժըպտան,
Մարդու համար
Օրւայ պէս վառ
Դիշերները լոյս կը տան:

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,
Էլ քեզ ո՛չ Շահ
Ո՛չ ահ ու մահ,
Ոչ զէնք ու զօրք կը յաղթեն:

III

Ու կրուի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նրրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի էրքնաղ հուրին Իրանի:
Ծով են աչքերը Զաւախքի դրստեր
Ու կորչում է մարդ նրրա հայեացքում,
Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
Որ բարձր Սբուլի գագաթն է ծածկում:
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նրրա սիրուն է հարբած էն հրսկան,
Նրրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առիւծի նման:
Թէ տիրես, մեծ Շահ, դու նրրա սրրտին,
Թաթուլն էլ անզօր կընկնի ոտիդ տակ;
Հանգիստ կը տիրես եւ Թըմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ:

IV

Էսպէս է ասել հընուց էտ մասին
Ֆարսի բիւլբիւլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՞նչը կը յաղթի կեանքում հերոսին,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Արեւի նման ճակատը պայծառ,
Նայում է խրրոխտ. կանգնած ինչպէս սար.
Ո՞վ կանի նրրան գետնին հաւասար,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Պարում է ասես կրռիւ գընալիս,
Գետընքից վերեւ թրռչում, ման գալիս.
Ո՞վ ցած կը բերի նրրան թրռչելիս,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Թէկուզ եւ արար աշխարհ գայ վրրան,
Կերթայ դէմ ու դէմ, տուր չի տալ իրան.
Ռուստէմ Զալն էլ չի յաղթիլ նրրան,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

V

Ու ղրրկեց Շահը իր թովիչ երգչին.
Գընա տե՛ս, ասա, Թրմկայ տիրուհուն,
Երգի իմ սէրը նրրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի նրան իմ ոսկի գահը,
Խոստացի նրան ամե՞ն, ամեն բան.
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
Երկրակալ Շահը՝ իր սիրած կընկան:

Ուր ահեղ կրռւով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ.
Եւ ահա՛ մի օր ծեր, թափառական
Մի աղքատ աշուղ մրտաւ Թմկաբերդ:

VI

Գոռում են, դողում Թրմկայ ծորերը,
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման.
Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
Արիւնը հոսում էն Քրռի նման:

Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
Արիւնը հոսում էն Քրռի նման.
Երգում է աշուղն իր Շահի սէրը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լրսում է մատաղ Թրմկայ տիրուհին.
Եւ վրրդովում են իր միտքը թագուն
Դաւաճան գործի ամօթը խորին
Եւ արքայական փառքն ու մեծութիւն...

Լրսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի անրրման.
Նայի Շահի՛ն, իրեն զօրքի՛ն,
Աշխարհքի տէրն անսահման...

Մեզ պէս տրկար մարդ է նա էլ
Սիրուհներին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել,
Լինիս շրքե՛ղ թագուհի...

Լքսում է չքնաղ Թրմկայ տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից.
Ու դարձաւ նա լուռ, դալուկ, մրտախոհ,
Ու քունը փախաւ սիրուն աչքերից...

VII

Դարձաւ իր կրուից իշխան Թաթուլը,
Դարձաւ յաղթական իրեն զօրքի հետ,
Սրբեց, պատեանը դրեաւ կեռ թուրը,
Ցընծութեան ձայնից դողաց Թրմկաբերդ:

Խնջոյք է սարքել Թրմկայ տիրուհին,
Ցերեկ է արել խաւար գիշերը.
Հեղեղի նման հոսում է գինին,
Ու քէֆ է անում Ջաւախքի տէրը:

Պրտոյտ է գալի չքնաղ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Ցորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրէ՛ք, իմ քաջ հիւրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խրմենք — Աստուած կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի:
— Է՛յ, Տէր Աստուած կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նրրա շուքը միշտ հանապազ
Մեր գլխիցը անպակաս:

Ու թընդում է Թրմուկ բերդը
Էն աղմուկից խընդութեան,
Որոտում են տաղն ու երգը
Դոռ ձայներով յաղթական:

— Էն մրթին ամպից արծիւն է իջնում,
Սարի արծիւը շեշտակի թափով:
— Էն Թրմկայ բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

—Էն Թրմկայ ձորում սեւ ամպն է գոռում:
Էն շանթն է ճայթում էնպէս ահարկու:
—Էն Թրմկայ ձորում Թաթուլն է կրուում,
Էն թուրն է շաչու էնպէս ահարկու:
Ինչ սարի արծիւ կը հասնի քաջին,
Ինչ Շահ կը կանգնի նրրա առաջին:

Ու չի դադարում երգի հետ վարար
Կախեթի գինին խելագար հոսել,
Խրմում են տիկնոջ թանգ կեանքի համար,
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խրմում են կրուող քաջերի փառքին,
Որ կրուի դաշտում կեանք չեն խընայում,
Եւ ընկածների սուրբ յիշատակին,
Որ երկընքիցն են այժմ իրենց նայում...

Պրտոյտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Ցորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Օ՜ֆ, տիրուհի, Աստած վրկայ,
Էլ չենք կարող մենք խրմել.
Էլ ուժ չը կայ, էլ տեղ չը կայ,
Շատ ենք խրմել ու յոգնել...

Ու հանգչում է Թրմուկ բերդը,
Պապանձում է ու մարում,
Հարբած, յոգնած տէրն ու զօրքը
Մրրափում են խաւարում:

VIII

Լուռ ու խաւարչտին կամարների տակ,
Յոգնած ու քընած բազմութեան վրրով
Թրռչում են, թրռչո՜ւմ, սեւ չարագուշակ
Երազներն ահեղ, անվերջ խրմբերով:

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթուել, իր բերդը պատել,
Գլուխը դրել ետ պոչի վրա:

Ու բարձրացնում է հրրէշն ահռելի,
Իրեն գլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչեւ բարձունքը բերդի,
Մինչեւ Թաթուլի պալատն ու տներ:

Պառկած է իբրեւ Թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գլուխն իր կրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հրրէշին:

Էսպէս է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է յանկարծ,
Իրեն սիրելի կընոջ գլուխի տեղ
Օձի գլուխն է կրծքին ծանրացած...

IX

Է՛յ, հրսկեցէ՛ք, ի՞նչ էք քընում,
Բաջ զինուորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսէք, տանջւում մրթնում,
Բուն չի այքին մօտ գալի:

Չը լինի թէ յաղթահարուած,
Ճարը հատած թշնամին
Դաւ է դընում մութն ու մեռած
Կէս գիշերւայ էս ժամին:

Վե՛ր կացէք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու գալի.
Հէ՛յ, զարթնեցէ՛ք, առիւծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:

Վե՛ր կացէք, վե՛ր, հարբեցրել է
Իր յաղթական հիւրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դաւաճան տիրուհին:

Դա՛ւ... դա՛ւ... ելէ՛ք... կոչնա՛կ... պահ-
նա՛կ...
Ձէ՛նք առէք շո՛ւտ... ձի հեծէ՛ք, ձի՛...
Ճրրընչում են, դրրդրրդում են
Դարպասները երկաթի...

X

Բաց արաւ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրրա, Զաւախքի վրրա,
Աւերակ բերդին, սեւ ամպի նման,
Ծուխն ու թրշնամին չոքել են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի եւ զօրքերն եւ տէր,
Ու յաւիտեան էլ մընացին քընած,
Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին
Ահա իրիկւան քէֆի սեղանը.
Նայում է Շահը անտէր զահոյքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկայ ոչ մի բան,
Ու մի՛ հաւատալ երբեք ոչ մէկին.
Ո՛չ բախտի, փառքի, ո՛չ մեծ յաղթութեան,
Ո՛չ սիրած կնկայ տրւած բաժակին...

Ու լի դառնութեամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկայ տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սեւ-աչեայ,
Միթէ Թաթուլը քաջ չէ՞ր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առաւել.
Մի բարձր ու ազնիւ տղամարդ էր նա.

Կնոջ մատնութեամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կեանքում երբեք խաբեբայ...

Էսպէս տիկինը տրւաւ պատասխան.
Անհուն ցասումից մըռընչաց Շահը.
— Հէյ, դահիճ, գոռաց գազանի նման,
Դահիճը իսկոյն մըտաւ սրահը:

XI

Դահիճն եկաւ ոտից գըլուխ
Կարմիր հագած ու արիւն,
Ու դուրս տարան իր պալատից
Թըմկայ չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ էն ժէռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
Էն ահաւոր քարի ծէրից
Դըլորեցին դէպի ծոր:

Գէլ ու աղէս եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ագռաւ իջան ամպից,
Սեւ աչքերը հանեցին:

Անցաւ անտես ու աննըման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպէս ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկել էլ նորից:

Անցար զալում էն մեծ արքան՝
Իրան փառքով ու զօրքով,
Անցաւ Թաթուլն էն յաղթական
Ու իր քաջերն էն կարգով։

Ու նրանցից մենակ անմեռ
Էս զրոյցը հասաւ մեզ,
Որ մեզանից յետոյ էլ դեռ
Պէտք է խօսւի միշտ էսպէս։

XII

Հէյ, պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դրէք իմ խաղին։

Ամենքս էսպէս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից։

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսւում լաւ ու վատ.
Մէջ, երանի՝ ով մարդ կը գայ
Ու մարդ կերթայ անարատ։

«Ազգային գրադարան»
NL0348094

32.250